

14. ԹՄԲԿԱՀԱՐԸ

Կըլի, չի ըլի մե մարթ, մե կնիկ։ Էտ մարթը դհոլչի կըլեր։

Մե տըր դար կնիկ էն մարթուն կասի.—Ե՛լ, քե՛լի, կո խառնիսի զուռնա կա, դհոլ չըկա, ե՛լ, տու էլ քո դհոլտ տար թըփի՛, փո՛ղ առ։

Էտ էլ կըլի, դհոլ կըվերցի, կէթա, էնքան կէթա, կիչկա՝ մարթ չըկա։ Մութ կընի, կըխասնի մե մարաքի, կէթա դաղ, որ քնի, կընստի կըտսնի մե կնիկ, մե մարթ վսկի, արծաթ կըպերեն, էնտեղ կըտնեն, որ առատունը վերցեն տանեն։ Էտ մառն էլ ուր դհոլ կըթփի, տանք էլ ախու կըփախնեն։ Էտ առատունը կըլի, կըվերցի էտ փողեր, կըլի կէթա։ Կէթա, կըխասնի մե հէրի մեչ, կըտսնի մե առչ։ Էտ մառն էտ առչեն ի վախենալըի, էտ առչն էլ էտ մարթեն ի վախենալըի. էտ էլի, ուր դհոլ կըթփի, կըթփի, էտ առչ կըլի, կըխաղա։ Մե մարթ քուչայեն կընսնի, իչկա՝ էտ հէրեն մե դհոլի ծեն ի իկալի, էտ էլ կըմնի էտ հէրի մեչ, որ իչկա, էտ առչ կըլի, կըփախնի։

Էտ մարթ կէթա աղային կասի.—Ես մե առչ պռնիր եմ էր, ընձի խմա խաղցուցես եմ էր, էտ մառն էկավ, փախցուց։

Էտ աղան էլ կըպռնի, էտ առչ փախցուցողի մնեն տաս պեռ փառչա կառնի, կըտա էտ առչի տիրոչ, էտ էլ կըլի, ուրախ-ուրախ կէթա տուն, ստեփ էտ, ուր կնիկ հա՜ կուտեն, հա՜ կուտեն։